

ՊԱՏՄԱԿԱՆ

ՂԸՐԵԲԸՆՈՒՄԵԼԻՔՆԵՐԸ¹⁾

Ա.

№ 764

Երես 1. օրինակը կոնդակաց Եփրեմ կաթողիկոսի 1812—1820։

Այսու յայտ առնեմք ամենեցուն, որոց հարկ իցէ գիւտել. յայտնի է ի պատմագրութենէ Հայոց, որ յամի Ցեառն 1212, յերկիրն արցախու—Զալալ անուն իշխանն Հայոց մականուանեալն Հասան՝ որդին երեկի իշխանին Հայոց վաետանկայ Սակառեանց՝ տէր և իշխող է լեալ խաչենոյ և ժողովրդեան նորա. յորմէ սերեալբն և յառաջացեալբն ևս միքան զմի պատուեալ և գերազանցեալք են մէլիքական պատուով և իշխանութեամք ընդ ժամանակս ժամանակս. ունելով զարիապետութիւն յերկիրն արցախու 'ի վերայ բեօլանու և զարիզիպիլու 'ի գրոց ծարու անուանեալ. և յառաջացեալքն են այսորիկ, նաև որդին մեծին ջալալայ Հասան իշխանին Աթաբէկ իշխող, նոյնպէս խաչենայ. և ապա զինք սերեալբն հետևաբար՝ հին Մէլիք Ուսուփն և որդի նորա մէլիք Պալասան. և որդի նորա Մէլիք բէկ. և որդի նորա Միրզայ Խան. և որդի նորա Մէլիք Ալլահվերդի և որդի նորա մէլիք Ալլահզուլի. և որդի նորա մէլիք Ալամ Խան. և որդի նորա գարձեալ մէլիք Ալլահվերդի. և որդի նորա մէլիք Սարգիսճան: Որոյ որդիրն են՝ Դանիէլն և Աղայ բէկն: Որոց Հօր եղբօր այ-

1) 1899 թ. սեպտեմբերին 10 օր պարապելով Մայր Աթոռի գրչագրաց մատենադադանում՝ այնաեղ դատանք միքանի կոնդակների սևագրեր Ղարաբաղի, Նսիջևանի և Շամշադնի մելիքների և նոցա տոհմաբանութեան, ինչպէս նաև այլ ազնուական ցեղերի վերաբերեալ, որ և հրատարակում ենք այսաեղ:

սինէն մէլիք Աղաջանի որդիքն են Ռուստամ և Շաքարօյ. և
սոցա մեծ հօրեղբօր որդին է Գրիգորն Արրահամեան։ Արդ
յաղագս այսպիսի մէլիքական տոհմականութեան նոցին սըր-
բազան Սինօթին արարատեան մեծի աթոռոյս վերահասու-
գոլով մըր իսկութեան 'ի պատմագրութենէ Հայոց և 'ի զա-
նազան հրովարտակացն նախնեացն ինքեանց՝ որբ ունին 'ի
ձեռս իւրեանց, կնքեմք և ստորագրեմք 'ի հաստատուն վկա-
յութիւն ճշմարտութեանն որպէս մեք, նոյնպէս և Սինօթա-
կան Արք Եպիսկոպոսունքն մեր. գրեցաւ յամի Տեառն 1820
յամսեանն ապրիլի 1 'ի տասներորդում ամի Հայրապետու-
թեան մերում. յարարատեան Աթոռ ամենայն Հայոց 'ի սուրբ
Կաթուղիկէ Էջմիածին։

Բ.

Վկայական վասն ազնուականութեան երից եղբարցն՝
Մանուկ, Ամետիս եւ Մանուէլ Սահակիչ Մէլիքովիցն-

Սուրբ ժողովն բարձրագոյն Խորհրդարանի արարատեան
Աթոռոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի ընկալաւ զգիր Խնդրոյ
երից հարացած եղբարցն Մանուկ, Աւետիս և Մանուէլ Սա-
հակիչ Մէլիքովիցն զոր մատուցեալ էին զվկայութիւն մէլի-
քական սերականութեան իւրեանց, յաղագս որոյ ըննեալ
վերահասու եղաք 'ի հնագոյն պատմութեանց մերոց, զի յի-
շեալ երեք եղբարցն են իսկապէս 'ի մէլիքական ցեղէ Մէլիք
Աստուածատուրին, որ 'ի հնում մէլիքական իշխանութեամբ
փոյլէր յերկիրն Ղարաբաղու հանգոյն միւս քաջազնեայ մէ-
լիքացն Հայոց։ Սա այս մէլիք Աստուածատուր կամ Ծատուր
ծնանի զմէլիք յակորն, և մէլիք յակորն՝ զմէլիք զնսւին կամ
Աւէտիբնտ Արդ այս մէլիք Աւէտիբն յամի 1711 Թուին, ա-
ռեալ զիւր երկոտասանամայ Սահակ որդին գնայ յերկիր
Օսմանեան 'ի Թօխաթ քաղաք, և անտի անցեալ յերկիրն
Նրիմու 'ի Քէֆէ քաղաք, ամուսնացուցանէ զնա անդանօր,
և յայնմ Սահակէ ծնանին ապա յիշեալ երեք եղբարցն Մա-
նուկ, Աւետիք և Մանուէլ, որք այժմ գոլով կենդանիք՝ մեծ
եղբայրն բնակի 'ի նորն նախիջևան, և Աւէտիբն և Մա-
նուէլն 'ի յԱղմէշիթ հանդերձ ընտանեօք իւրեանց և յաջո-

զութեամբն Աստուծոյ փայլին ընդ հովանաւորութեամբ
Քրիստոսազօր ամենաբաղզը Տէրութեան ոռւսաց։ Արդ՝ յա-
շագս Մէլիքական ցեղաբանութեան յիշեալ երեց եղարցն
այսքան հաւասար գոլով վկայեալ կնքեմք և ստորագրեմք,
անդամբ սուրբ ժողովոյն բարձրագոյն Խորհրդարանի արա-
բատեան Աթոռոյ սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի յամի Տեառն
1818 յամսեանն յուղիսի։

ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՄԵԼԻՔՆԵՐԸ

Նոյն. եր. 248.

Մեր ներքոյ կնքող և ստորագրող հայկազնեայ բնակիչքս
Նախչուանու և Աստապատու հոգեորականք և ժողովրդա-
կանբ ունելով զբարւոք տեղեկութիւն 'ի նախնեաց և 'ի
հարց մերոց, վկայեմք աստուածակոյս կողմանէ, որ յամի
Տեառն 1750 յաւուրս թագաւորութեան Նատր Շահին
պարսից մէլիք բալումն ունելով յազգէ յազգ զմէլիքութիւն
նախչուանայ աստապատու, փայլեր երկելի իմ փառաւորու-
թեամբ և Ճոխութեամբ, որ և 'ի հարկահանացն յիշեալ
Շահին պարսից ընդ այլ իշխանացն հայոց բազում նեղու-
թեամբ չարչարեալ ընկանու զվախճան կենաց իւրոց և թո-
ղու զիշխանութիւն մէլիքութեանն Խաչատուր որդոյ իւրոյ.
այս Խաչատուրս ծնանի Բ որդի Մկրտիչ և Միքայէլ Մկրտ-
տիչն առանձնանայ 'ի կարգս կրօնաւորութեան, և զինի
մահուան Խաչատուր Հօրն իւրեանց մնաց մէլիքութիւնն 'ի
վերայ Միքայէլին։ Այս Միքայէլ ծնանի երեք որդի՝ Գալուստ
Մկրտիչ և Խաչատուր, Խաչատուրն մտանէ 'ի կարգս կրօ-
նաւորութեան, Մկրտիչն ամուսնացեալ՝ ծնանի զՍարգիս և
զերկուս դստերս. իսկ մեծ որդին Միքայէլի Գալուստ մէլիք
Քալումովն ծնանի զերիս որդիս և զմի դուստր՝ զՊետրոս,
զՊօղոս, զՅարութիւն և զՅուլթան, որ այժմ ներկայ կեն-
դանի գոլով, հանդերձ ընտանեօքն գնացեալ բնակեալ են 'ի
կայսերական մայրաքաղաքն Թիֆլիզ և ահա այսպէս գոլով
նորա ստուգիւ 'ի սելնդոցն յիշեալ մէլիք բալութին, մինչև
ցայսօր յանուանէ նորա անուանին Մէլիք-Քալումեանք եւ
առ 'ի ստուգութիւն այսորիկ, ըստ Խնդրոյ յիշեալ երեք